Այդ ցասումը զարմանալի ուժով երևան եկաւ. Ալեքսանդրապոլի վրա էին գնում զիւղացիներն ամէն կողմից՝ զինուած, անզէն, հեծեալ և հետիոտն՝ ճնշելու չարժումը, առաջ բերուած Ազրբէջանին, Տաճկաստանին և Ռուսաստանին վաճառուած մարդկանց ձեռքով:

Որքան ողորմելի էին չարժման հետևորդները, նոյնքան և աւելի ողորմելի ու ստոր էին ղեկավարները, և հայ ժողովուրդը, թէպէտ տնտեսական ճգնաժամի մէջ, ցոյց տուեց, որ չի կարող հանդուրժել դողերի ու սրիկաների դաւադրութիւնը: Ժողովրդական այդ մեծ ցասումը բուռն արտայայտութիւնն էր նրա ցանկութեան՝ անկախ լինելու և վճռական կամքի՝ հարուածելու նրանց, ովքեր փորձ կանեն վտանգել իր անկախութիւնը (խանդավառ, ոգևորվածից ծափեր):

Անհերքելի է, որ խորհրդարանական ղեկավարները, ապրով հայ, յարաբերութեան մէջ էին Տաճկաստանի և Ազրբէջանի հետ. և թքելով իրենց սկզբունքների վրա՝ դալիս էին հրով ու սրով ճնշելու ինքնորոշուած Հայաստանի անկախութիւնը: Բայց հայ ժողովուրդն ուզում է լինել անկախ և բացի այդ, Միացեալ Հայաստանի անկախութիւնը պաշտպանում է նա բոլոր միջոցներով, բոլորի դէմ (խանդավառ, աղմկալից ծափեր). այդ փաստը մենք տեսանք: Եթէ մինչև այժմ կարծում էին, թէ այդ դաղափարները ղեկավար կուսակցութեան յղացումն են միայն, թո՛ղ այժմ տեսնեն, որ համայն ժողովրդի ցանկութիւնն է այդ և որ Հ. Յ. Դաշնակցութիւնը ճշտորէն ձևակերպել է հայ ժողովրդի իդէալը:

Մեծամասնական չարժումը ունեցաւ բուժիչ հետևանքներ. նա բացեց մեր ռամկավար աչքերը. շատերը պաշտպանեցին ռամկավարութեան աւտարանի բոլոր սկզբունքները, բայց չարժումը ցոյց տուեց, որ մեր երկրի օտար տարրերը հաշուած չեն, չեն հաշուի նաև յետագայում Հայաստանի անկախութեան մտքի հետ և ոգի ի բուն պէտք է պայքարեն նրա դէմ:

Մեծամասնականները առաւելապէս յենուեցին այն տարրերի վրա, որոնք իրենց յետին նպատակներով դէմ էին մեր պետական կազմին. առաջին նետուածուն այդ դաւադիրների շարքում կազմում էին ռուսները, նրանք, որ այս դերազանցօրէն ռամկավար երկրում հանդիսանում են ազնուականներ. հողեր ունեն աւելի, քան թէ կարող են մշակել, աւելորդ հողաբաժիններ տալիս են հայերին մշակելու՝ չահագործելով աշխատանքն ու կլանելով արդիւնքը. և Հայաստանի կառավարութիւնը հանդուրժում էր դեռ այդ ազնուականութիւնը, չէր դիպչում նրանց. բայց նրանք, իրենց ազնուականութեան օրերը համրած են տեսնում և միանում են դաւադիրներին: Դուք դիտէք, որ ռուսական տիրապետութեան ժամանակ հայ զիւղացին իրաւունք չունէր խճուղու մէջտեղով սայլը քշելու, նրան թողած էր խճուղու մէկ երրորդ մասը. այժմ յուզում են նրանք, երբ տեսնում են, որ հայը չէ թէ աւելի, այլ իրենց հաւասար օգտւում է Հայաստանի խճուղիներից: Լսելով, որ կարմիր զօրքերը դալիս են Ազրբէջան՝ նրանք բոլորն յարմար դտան, ապստամբեցին, որպէսզի բերեն Ռուսաստանին և վերականգնեն իրենց արտօնութիւնները:

Թիւրք ժողովուրդն ևս հաշուած չէ Հայաստանի անկախութեան հետ. եթէ վերջանում է այս երկրում ռուսների տիրապետութիւնը, ապա պիտի վերջանայ նաև հայի տիրապետութիւնն ու հաստատուի իրենցը: Ինչպէս կարող են նրանք հանդուրժել տիրապետութիւնն այն հայի, որին մարդու տեղ չէին դնում և որին կոտորել դիտէին միայն: Այս էր նրանց մտայնութիւնը, որ երբեք փոխուած չէ և փոխուելու տրամադրութիւն ցոյց չի տալիս: